«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԻՎ 2

Սույն արձանագրությունը կազմված է 2025 թվականի հուլիսի 25-ին, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղում, բաղկացած է 2 (երկու) թերթից:

«Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) Ընդհանուր ժողովը գումարվել է 2025 թվականի հուլիսի 25-ին, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղում:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեին և մասնակցում էին Կազմակերպության բոլոր անդամները:

Ընդհանուր ժողովին մասնակցում էին հյուրեր՝ ՀՀ Տավուշի մարզպետարանից, Նոյեմբերյան համայնքից, բարերարներ և այլ անձինք:

Միաձայն Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց Հերմար Յուզբաշյան-ը, քարտուղար՝ Ֆաղյան Բանյան-ը:

Ժողովի օրակարգը՝

1. Կազմակերպության գործունեության նպատակների և ուղղությունների ներկայացում,
2. Կազմակերպության անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու կանոնակարգի սահմանումը.
3. Կազմակերպության խորհրդի ընտրություն, Կազմակերպության խորհրդի անհատական կազմի, գործունեության կանոնակարգի և իրավասությունների սահմանում.
4. Կազմակերպության կառուցվածքի հաստատում,
5. Կազմակերպության անդամավճարի չափի սահմանում.
6. Կազմակերպության անդամավճարի գանձման կազմակերպման կարգի սահմանում.
7. Կազմակերպության ներքին կարգապահական կանոնների սահմանում.
8. Կազմակերպության խրախուսման միջոցների, կարգի և ձևերի սահմանում.
9. Ոսկեվանի օրվա սահմանում:

Ելույթներից, քննարկման դրված փաստաթղթերի նախագծերի քննարկումից և առաջարկություններից հետո օրակարգի հարցերը դրվեցին քվեարկության:

Ամփոփելով քվեարկության արդյունքները Կազմակերպության Ընդհանուր ժողովը ՄԻԱՁԱՅՆ որոշեց.

1. Հավանություն տալ Կազմակերպության գործունեության նպատակներին և ուղղություններին,

2. Սահմանել Կազմակերպության անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու կանոնակարգը՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N1 որոշում.

3. Ընտրել Կազմակերպության խորհուրդ և սահմանել Կազմակերպության Խորհրդի անհատական կազմը, Կազմակերպության Խորհրդի գործունեության կանոնակարգը և իրավասությունները՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N2 որոշում.

4. Հաստատել Կազմակերպության կառուցվածքը՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N3 որոշում.

5. Սահմանել Կազմակերպության անդամավճարի չափը՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N4 որոշում.

6. Սահմանել Կազմակերպության անդամավճարի գանձման կազմակերպման կարգը՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N5 որոշում.

7. Սահմանել Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N6 որոշում.

8. Սահմանել Կազմակերպության խրախուսման միջոցները, կարգը և ձևերը՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N7որոշում.

9. Սահմանել, հուլիսի 25-ը, որպես Ոսկեվանի օր՝ Ընդհանուր ժողովի 25.07.2025թ. N8 որոշում:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ Ի. Գրիգորյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ Ս. Բաբայան:

25.07.2025թ.